



ՀԱՅ Կ Ա Կ Ա Ն Ք

ՀԱՅ – ՎԵՆԵՏ

Ազգային նոր պատմութեան տեսակիտով մեծապէս հետաքննական երկասիրութիւն մը կը սկսինք հրատարակել յօրագրիս, ազգին արդէն հանրածանօթ և սիրելի գրչի մը արտագրութիւն: Չէնք տարակուսիր որ ինչպէս իրեն ուրիշ բազմութիւն և բազմահմուտ երկք՝ այս ալ մեծապէս հաճոյ պիտի ըլլայ ազգին լրութեանը: Երեք մասն բաժնուած է այս գրուածքը. առաջինն՝ վերաբերութիւնը Հայոց ընդ Վենետոս՝ յանդիմանակ ժամանակաց մինչև ի վերջ թագաւորութեան Ռուբինեանց: Երկրորդն Ռուբինեանց իշխանութեան դադրելէն՝ մինչև ի վերջոսաններորդ դար: Երրորդն՝ վերջոսաններորդ դարէն մինչև ի վերջ հասարակագիտութեան Վենետոյ: Հեղինակն իտալերէն գրած է, և հարիւրաւոր լատին և իտալ վկայագրերով հաստատած, որոց պատշաճագոյն երեւցածները կը թարգմանեմք:



ՆԻՀԱՆՈՒՐ ազգաց պատմութեան մէջ դէպք մը՝ որ զարմանախառն ազդեցութիւն մը կը գործէ հետաքննեաց վրայ, այլալեզու և այլակերպ ազգաց՝ իրարու հետ ունեցած անակնկալ յարաբերութիւնն է. և այս իրաւացի զարմանքն այնչափ աւելի մեծագոյն կը լինի՝ որչափ այդ ազգերն իրարմէ հեռու ըլլան հայրենեզք. ոչ միայն ծովերով ու ցամաքներով անշատեալք՝ այլ և ընդմիջեալ ազգերով և ժողովրդովք, որոց հետ թերեւս այնչափ սերտ յարաբերութիւն չեն ունեցած՝ որքան իրարու հետ այդ հեռաւոր և բաժանեալ ազգերը: Սակայն հեռաւորութիւնն յայտնի կ'ընէ՝ որ որքան ժամանակի հեռաւորութիւնը մեծ լինի՝ այնչափ ալ աղօտ, նուրբ և կերպով մը անշուշտփելի պէտք է լինին անոնց յարաբերութիւններն. մինչև մերձաւոր ժամանակ և

Ներկայութիւն գրաւոր հաւաստեաց կամ յիշատակարանաց՝ պատմութիւնը և անոր ստուգութիւնը յիշատակը հաստատեն։ Այլ և զայն չէ կարելի ժխտել որ գրեթէ ամէն ազգաց պատմութեան ըսկիդրն անօր և գրեթէ առասպելական է, և թէ պէտք և արժան չէ յառիւ ի նոսին իբրև իրական բաներու։ սակայն այն խուսափուկ և ստուերական երևութից մէջ ալ կայ գաղտնի զուարճութիւն և հաճոյք մը։ անաչառ միտք թէպէտ և մերժէ զանոնք, սակայն երեւակայութիւնն միշտ հաշտ աչքով կը նայի այն առասպելաց վրայ, և կարծես թէ կը փնտռէ իսկ զանոնք։ բայց երևակայութիւն ըսելով կը հասկնամ ոչ զանձարձակն և զցնորական, այլ որ յեցեալ լինի յաւանդութիւն ինչ և ի հաւանականութիւն, կամ ի յարմարաւոր և հնարաւոր կարելիութիւն։

Մեր աչաց առջև պարզելով պատմական համասփիւռ աշխարհացոյցը, և ուշադրութիւննիս Հայաստանի վրայ դարձնելով, հետեւեալ երեք ինչ աներկբայ հաւաստութեամբ ընդունելի կը թուի մեզ։ — Ա. Հայ ազգին և աշխարհին հնութիւնը, ստոյգ պատմութեան սկզբէն ի վեր, որ ջրհեղեղով կը սկսի, և անմիջապէս անկէ վերջ աշխարհագրական անուամբ Հայաստան կամ Արարատեան երկիր կը կոչուի։ — Բ. Այս երկրին բնիկ ժողովուրդը՝ Հայք, ի նահապետէն ալ յառաջ եկած լինին (միշտ ՚ի Թաքեթեանց), հնագոյն ազգաց հետ ի միասին կը յիշուին։ և երկրիս մեծ կերպարանափոխութեան՝ այսինքն ազգաց բաժանման և ցրման օրերէն սկսեալ, կամ քիչ վերջը, մինչև այս օրս անպակաս բնակիւր են հօն։ — Գ. Զի այդ յամառ և անբաղ ընակութեամբն ալ ՚ի վերայ հայրենի հողոյն, ոչ փոքր՝ այլ մեծ մասն մի հայ ժողովրդեան ընդարդս իմի բարուք ստեպ գաղմբեր է և կը գաղթէ, ոչ միայն մերձաւոր և հեռաւոր աշխարհներ, այլ պէտք համարած տեսնը նաև ՚ի ծագս իսկ երկրի, — եթէ կը վայլէ այսպէս ըսել, — այլ և այլ պատճառներով։ Մեր այս ըսածին յայտնի վկայութիւն կու տան ամենայն ծանօթը ներկայ քաղաքավարութեան աշխարհի և մերձաւոր դիպուածոց, և նոյն իսկ ընթերցողք լրագրաց։ Ուրեմն զարմանալու չէ՝ եթէ ըստ բաղդի կամ ոչ բաղդի՝ աշխարհաքաղաքացի կը համարուին Հայք, և ընդ գերագոյնս ի նոսին, որով և ի հարկէ այլ և այլ օրինակաւ և չափով ի յարաբերութեան ընդ օտարալեզու և օտարաբարոյ հեռաւոր ազգս և նշանաւոր կեդրոնս, մանաւանդ ի յահաստանս և ի գլխաւոր մայրաքաղաքս։

Հիմկուհիմայ թոյլ տրուի մեզ վերցնել նախնի և կէս պատմական դարուց քօղը, և թողով ուրիշ ամէն երկիրներու և ազգաց վիճակը՝ քննել Հայոց ստոյգ կամ անստոյգ կյորգութիւնները կամ ծանօթութիւնը՝ միջին դարուց և նոր պատմութեան ամենէն աւելի նկատելի ու զարմանալի ազգի ու նահանգի մը հետ, հաշակաւոր և գեղապանծ վեներուկոյ։ Ստոյգ պատմութեան կարելի չէ այս երկու ազ-

գերը հաւասարել ընդ միմեանս, այնչափ երկար է խտիր ժամանակի՝ եթէ ոչ ըստ ծագման, վասն զի գրեթէ հարկ է ամենուն զուգաժամանակ ըլլալ, — այլ ըստ յայտնութեան, և պէտք է ըսել՝ թէ այն օրն յորում յայեաց կը ծնանէր կոյսն վենետիկ, կը մեռնէր հինն Այրարատ, ոչ երիտասարդ ըստ դարուց, այլ իր հազարամեայ էութեան չըլանօք կարի իսկ ծերացեալ, որոնցմով կատարեց իր զօրութեան և մեծութեան էական չըլանը, որ երկարատեւ էր քան ըզչըլան հասարակապետութեան վենետիկ, ապրելով հնոյ աշխարհին հնագոյն ազգաց հետ, ընդ որս երկրիս թատեր վրայ խաղաց իր խաղը։ Սակայն քաւ, ոչ մեռաւ, այլ նուաղեցաւ միայն, և ըստ ինքնակենցութեան օրինաց՝ ի խոնարհագոյն կեանս յեղափոխեցաւ. և թէպէտ մեռած ալ ուզենանք համարել զինքը, այլ այնպիսի մահումա՞ր որպէս և վենետիկ յետ կորստեան իւր իշխանութեանը։ Եւ զի պիտի համարձակի ըսել կամ հանդուրժել լսել այսպիսի ինչ ազգական ծովուց այս չքնաղ գլխոյիս համար՝ յետ գրեթէ դարու միոյ իր բազդին յեղափոխութեան։ Նոյնը պէտք է իմանալ և վասն Այրարատայ՝ նախածնելոյն յալեաց համաշխարհական ուղիւնու ջրհեղեղին։ Բայց ոչ ի սպառ, յանշտութեան և նուազութեան հազար տարիներու մէջ, այլ և ի մեծ և նորահալ կենդանութեան և զօրութեան, որով աւելի սերտագոյն կցորդութիւն ունեցաւ ընդ վենետիկոյ, ինչպէս պիտի տեսնենք քիչ մը ետքը, և որ նպատակ է մեր այս գրուածին։

Ձեռք առնունք հիմայ գլխով կիսապատում ժամանակաց, որ չեմ գիտեր ինչ կերպով վրիպեցաւ մեզմէ. և որովհետեւ տեսանք զՀայս՝ հնագոյն դարուց մէջ ստուգապէս հանդիսացած, արժան է փնտռել նաև վենետիկոյ խանձարութիւնը, կամ անոր էութեան առաջին վիճակը, քանի որ դեռ այն չքեղ կերպարանն ստացած չէր՝ որով ի հինգերորդ դարէ ցվերջ ութուտասներորդին տեսարան եղաւ Եւրոպիոյ և Ասիոյ. և եթէ այս վերածնութենէն նոյնչափ ժամանակ և դար վեր ելլենք, գրեթէ Տրոյական պատերազմաց զիւցաղնական ժամանակը կ'ը հասնինք. և հին՝ այլ ոչ երբէք հնանալի քերդոյն, մանաւանդ թէ ամենայն մտաց և դարուց մանկացուցին Հոմեր, իր մոգական մատամբքը կը պօղէ մեզ զուրուական վենետիկոյ՝ տառի մը նուազութեամբ կամ այլափոխութեամբ, Հենետո կամ Ենետո կոչելով՝ Պափլագոնաց ցեղ մը, քալաձիտց և քալալորեաց.¹ որոց համար կը վկայէ և Սոփոկլ, թէ յօգնութիւն եկած ըլլան տարաբանոց.

1. Հոմեր. Իլիական Բ. 85. Տ. 577: — Ֆիլիպպի կը կարծէ թէ Նրոդոտ (Մ. Տիզ) Վենետոյ գաղթած ըլլամ ի Մարաց, ուր յոյս պատմընիմ խօսքը Երգեմաց վրայ է և ոչ Վենետոյց:

ծերունոյն Պրիամու. առ որ կանխեր հասեր էին յօժանդակութիւն պարատեսան զնդաց քաջաձի սերունդը, իրենց Զարմայր նահապետին հետ, որ՝ Հիկտորի՝ հետ ինկաւ ի յաւերժայիշատակ դաշտին. բայց ոչ յայլմէ վարնուած, ինչպէս կը փափաքի և կ'ազլէ Պատմիչն մեր, այլ միայն ի գիւցազնագոյն դիւցազնէն Աքիլլեայ: Չմտ գիտեր թէ այդպիսի փառաւոր արկած մը հանդիպեցաւ արդեօք և Պիլեմոնի՝ առաջնորդին վենետաց կամ Հենետաց, երբ Տրովարայ պարսպաց տակ ինկաւ և նա. բայց ինչ հաճոյ է նկատել երկու ազգերն, ըզոտաւ և զՀայս, մեր քիչ յառաջ յիշած գաշին համեմատ՝ պատմական ժամանակաց այդ արշալոյաց մէջ, իբր համերաշխ, նիզակակից և գործակից, և գրեթէ իւրք իւրք նաև համանման: Վասն զի Պափլագոնացիք նաև սահմանօք իսկ մերձաւորը էին փոքրուն Հայոց և Հայախաղտեաց գաւառաց, Ալիւս դետով բաժնուելով. զգեստութեալ համաձեք, ինչպէս կը հաւատարմացընեն հինք, կրելով զտարազ և զձև փոխադական. և զարմանալի իմն հանդիպմամբ՝ նոյն էր այդ երկու ազգաց ալ գլխաւոր նշանակը և այլաբանական ցոյցը: Երանօթ է հնագիտաց թէ ինչպէս խրոխտ Հռովմայեցիք իրենց արձանաց և գլխաւորութեալ վրայ սովոր էին կերպարանել զՀայաստան ի մանուկ փոքրագետակ. վենետկեցիք ալ նոյն փոքրագացի գտակը կը դնէին իրենց դքսից գլուխը, և նիւթապէս տնդրեաց և պատկերաց վրայ: Վենետկեան յիշատակաց հետամտից թողլով քննել և յայտնել թէ որքան հաւանականութիւն կրնայ ունենալ իրենց չքնադակերտ քաղաքին և՛ ազգութեան սկզբնաւորութիւնը՝ կամ թէ ըսենք մկրտութիւնը, հաստատել Գրիստոսի 424 թուականին և ի 25 մարտի, ըսենք թէ մեր հայկական պատմաց յիշատակը ալ՝ նոյն տարուան մէջ կը դնեն կարնոյ քաղաքին բերդին՝ ի Բարձր Հայս հիմնարկութիւնն կամ ընդարձակութիւնը, որպէս զի լիցի ամուր ապաւինի կամ նիստ արիմտեան յունական — հայոց կուսակալին՝ Բիւզանդիոնի կայսեր կողմանէ, Սասանեանց դէմ դնելու համար, որ Հայաստանի արևելեան մասին Գերիշտանք էին (suzerain), և քիչ ետքը նաև տեսարք: Այն քաղաքն և բերդն որ հիմայ Էրզիրում, կամ Երկիր և Արզն Ռու, նաց կը կոչուի, այդ ժամանակէն և ինչուան ետքը նոյն վիճակին և պաշտաման մէջ մնաց՝ որոյ համար շինուեցաւ. մանաւանդ թէ ալ աւելի: Վասն զի Հայոց հին մայրաքաղաքաց աղօտանալէն և աւերելէն ետքը, երբ յետին մայրաքաղաքն ալ Դուին սասանութեամբ քունդեցաւ, կարնոյ քաղաքն հազար տարիէ ի վեր՝ Հայոց քաղաքաց առաջին և գլխաւորը սեպուած է, ինչպէս ցայսօր՝ գէթ օսմանեան Հայաստանի մասին մէջ. և թուրքաց պետութեան գլխաւոր նահանգաւոր և զօրանիստ քաղաքաց մին, և հզոր մարտկոց ընդդէմ ռուսական զօրութեան: Արդ ըստ այսմ տեսութեան և ըստ ժամանակի ծննդոց՝ երկուորեակն վենետկոյ կարին՝ իւր սեպհական տևողու.

Թեամբը յերկարատե եղաւ քան զԺովադարիակ քոյրն : Ո՛րչափ ան-
նմանք իրարու ոչ միայն ըստ քաղաքական հանդամանաց, այլ նաեւ
բնական դրիւք . զի մինչ բարեհամբոյրս Վենետիկ՝ հեզօրէն մինչև
յերեսս ծովուն՝ որ կեանք և զարդ եղաւ իրեն, հարթ հաւասար զե-
տեղուած է, ընդ հակառակն Կարին՝ կարծես թէ ըստ անուան հին
նահանգին (Բարձր Հայոց) յորում հիմնարկուած է, իր աշտարա-
կաց համար ողական իմն ալիք կը փնտոէ, 6000 ոտնաչափ բարձրանա-
լով Պոնտոսի ծովուն երեսէն, որոյ մերձաւորագոյն է քան այլ ծո-
վուց, և է ամենահին և համբաւաւոր կեդրոն մը վաճառուց արեւելեան
աշխարհաց՝ որի Հնդկաց և ի Պարսից . ինչպէս կը վկայէ նաեւ աշխար-
հագիրն Մարկոս Պոլոս, և իրմէ աւելի հնագոյն Արաբացի և այլ
օտարազգի պատմիչք :

Վենետիկոյ ծննդեան թուականին երկբայոյդք, հաւանականագոյն
կը համարին անոր հասարակապետութեան կազմակերպութեան
թուականը դնել 451—2 տարին, երբ հիւսիսայնոյն Ատտիլայ ձեռ-
քէն փախչելով՝ ադրիական ծոցոյն ճախճախուտեները ծովէն ու ցա-
մաքէն աւելի հզօրագոյն համարեցան ի պաշտպանութիւն անձանց :
Այդ տարուան մէջ զուգադէպ կը հանդիպէր նաեւ ի Հայաստան, աւագ,
ոչ եթէ ծնունդ՝ այլ մեծ մահ մը . Հայոց համազգային կամ համիչ-
խան միութեան մահը . վասն զի կենաց ու մահուան մեծ վտանգի
ու տաղանային մէջ յերեսաց հրապաշտից Պարսից՝ վերջին անգամ կը
գումարէր կը ժողվէր իր հաւատարիմ որդիքը, յանուն համօրէն հայ-
յութեան . ու մահուան պատերազմը կու տար առաջնորդութեամբ
քայազունին ի զօրավարս ժամանակին, սրբոյն և մեծին Վարդանայ,
որ դիւցազնօրէն՝ նահատակեցաւ այն անմահանալի օրուան մէջ (2
յուլիս, 451) և առաքինակրօն ընկերօքն առաքինարար ինկաւ հայ-
րենեաց համար, և այդպիսի քաջութեամբ ինկած բանակը՝ վերա-
ցոյց բարձրացոյց մինչև յաստեղս ի վեր : Զկարծէ ոք թէ ընդ Հայ-
կին և Վահագնի՝ իր նախնեաց՝ դասեցաւ համաստեղութեանց կար-
գի մէջ այլ աւելի գերագոյն սեղ մը, ի խորանս Յիսուսի . և ստու-
գութեամբ, զի այն օրունէն ի վեր՝ եկեղեցի և աշխարհ Հայաստա-
նեայց տարուէ տարի կը կատարեն սրբոց Վարդանանց՝ հազար երե-
սուն և վեց նահատակաց՝ տօնախումբ հանդէսը, և դադրելով յամե-
նայն զբաղմանց և ի տուրեառիկ գործոց՝ գերադոյն յաղթութեան
յիշատակ մը կատարեն յեկեղեցւոյ, վարժարանաց և խնջոյից մէջ . —
փոխանակ քաղաքի մը ջրածնութեան՝ բովանդակ ազգ մը արեամբ
վերածելով ի կենդանութիւն, որոյ տեղութեան չափն է՝ կրօնք՝
երկրաւոր անմահութիւն, շաղկապ երկնաւորին և անանց յաւի-
տեանականի :

Եթէ այդ երկատեսիլ թուականին վրայ դար մ'աչ աւելցնենք
(451—551), յիշատակարանք ուրիշ նոր հայկական—վենետիկեան զու-

գաղիպուլթիւն մը կը ցուցնեն ներկայացընելով մեզ նոյն ժամանակին հռովմէական բանակաց արիագոյն զօրավարը, զՆերսէս Պատրիկ. որոյ առօտարս համաշխարհական անունն և համբաւ, աւելի կերպով մը սեփականագոյն է առ վենետկեցիս և առ Հայս. առ մեզ՝ զի մեր ազգին և յարենէ ընծայեցաւ, թէպէտ և ի ծառայութեան բիւզանդեան կայսերաց. իսկ առ վենետկեցիս՝ յորոց հիւրասեր մեծաբանք ընդունեցաւ, մինչ հազիւ խրճթաց մէջ զլուխնին ծովէն վեր վերցուցած կը թուէին. և տեղացի ձկնորսակ նաւակներէն օգտուեցաւ, իր զօրքերը կրելու և այն ծովափանց աւերողքը վանելու համար. և իրենցմէ տեսած և ընդունած այս ծառայութեան փոխարէն՝ միշնորդ հաշտութեան լինելով ընդ պատաւիրոնացիս և վենետկեցիս. և այն ժամու դեռ ևս անկերպարան վենետիկ քաղաքին մէջ կառուցանելով առաջին եկեղեցիքը և դրատուն մ'ալ. Մեր ժամանակաց ստուգախնդիր քննութեանց համար՝ աւանդական, որով և վիճեցի սեպուած են այս դէպք. և նոր քննիչք և նորայայտ յիշատակարանք կը համարին և կ'աւանդեն, թէ ոչ ի կէս վեցերորդ դարու, այլ ի սկիզբն իններորդին շինած ըլլան Ս. Թէոդորոս՝ վենետիկոյ մայր եկեղեցեաց առաջինն՝ զուգակցան նուիրելով Ս. Գեւորգիոսի՝ Ներսիսէ մը, որոյ եղբայրն ալ նոյն եկեղեցւոյն եպիսկոպոսն եղած ըլլայ. Այդ երկու համանուն անձանց գործերն որչափ ալ իրարմէ առաւել կամ նուազ ստուգութիւն ունենան, թէ յառաջնոյն և թէ յերկրորդէն հաւաստի բան մը կը մնայ, և որ մեզ համար կարեւորագոյն է ի ժամուս, և է հայկական և վենետկեան ձեռաց մտերմաբար և օժանդակօրէն առ միմեանս կարկառիլը:

Անտարակուսելի է որ Զ-Ը դարուց մէջ ի Հռաւեննա հաստատուած կայսերական փոխարքայից աթոռը, օգնական և զօրաւիգն էր վենետաց: Ոմանք ի փոխարքայիցդ ոչ միայն հայ էին ազգաւ, որպէս Ներսէս, Գրիգոր և Իսահակ, որոյ հոյակապ դամբարանին արձանագիրք ի Ս. Վիտալ եկեղեցւոյ Հռաւեննայ կը վկայեն ցայսօր, այլ և ամբողջ հայկական գունդ մը Numerus Armeniorum, կը նստէր հօն ի պահպանութիւն իտալիոյ. և քաղաքին ծովափնեայ թաղերէն մին ի պատճառս նստոյի և ազգի զօրականին՝ կը կոչուէր Classis, Armenia, թաղին անուանի տաճարն նուիրեալ էր սրբոյն Ապողինարի. և այդ անունը կը կրէր մինչև ի ԺՊ դար՝ իբրու մասն մի կամ զատ քաղաքիկ մը համարուելով: Ոչ միայն իրենց մերձաւորաց, այլ և հեռաւոր նորակիրթ վաճառականաց վենետաց՝ պակաս չէին ընել իրենց թեւարկութիւնը՝ փոխարքայք Հռաւեննայ. ինչպէս կը յիշուի յանուանէ յաջորդն Ներսիսի Լոնգինոս, որ այդ օգնութիւնը չէր զլանար մինչև ի սահմանս Անտիոքայ Ասորուց զնացողաց, այն սահմաններն՝ որ յետոյ զլիաւոր կէտք կամ թատեիք եղան Հայոց ընդ վենետկեցիս վաճառականութեան և յարաբերութեանց, ինչ-

պէս վերը պիտի տեսնենք, իսկ թէ ընդ ցամաք ալ աւելի յառաջ կ'երթային շահախնդիր վեներոք, մինչև ի խոր Հայս, և անոր արևելեան մեծ մայրաքաղաքը Դուին, զոր մի ի մեծագոյն շահաստանաց Ասիոյ կը դրուատեն գրիչք Յունաց և Արաքսոց եւ ը դարուց մէջ, ինչպէս քաջ հետաքննութեամբ պարզեց արդէն հմուտն Հայտն. կամ թէ և Հայք՝ անոնցմէ ոչինչ նուազ բազմաշրջիկք և շահախնդիրք և ճարտարք՝ կը հանդիպէին մինչև յաղտաղտուկ ամուսնու վեներական ծոցոյն, — ստոյգ և որոշակի բան մը չենք կրնար ըսել, այլ մեծապէս հաւանական կը թուի. վասն զի եթէ ուրիշ ազգաց երթեկեք էին ի Դուին և ի վաճառաշահ քաղաքս իտալիոյ, եւս աստաւել Հայք՝ որոց համար վաճառականութեան ոգին բնածին իմն էր և կրնայ համարուիլ. մանաւանդ զի՝ ինչպէս տեսանք, այդ դարուց և ժամանակաց մէջ խմբովին կու գային Հայ զօրականք և զօրավարք, և կը բնակէին Ագրիականի եզերքն, և անշուշտ իրենց ազգականք և աղգակիցք ալ, գէթ ոմանք, կրնային գալ ոչ կռուոյ՝ այլ շահու պատճառաւ:

Կը թողունք յիշատակել նաև դեսպանաց երթեկեք, ինչպէս նաև հայազգեաց ոմանց ի դրանէ կայսեր, և աստուստ՝ աւագաց և գըքսերու որդւոց ի Կոստանդնուպոլիս՝ մանաւանդ ի սկիզբն ինններորդ դարու. ինչպէս ծովապետ՝ նախարարն Կեփալենեայ Պօղոս, — որոյ մականունն Cespheano այլ և այլ այլագրութեամբ՝ հայերէն կը թուի Գենաց ի դիմաց Պեպինոսի ի պաշտպանութիւն վենետաց (809-10). և Արսափիոս (Arsaphius) անոր մերձանուն՝ Նիկեփոր կայսեր կողմանէ գնաց դեսպանութեամբ յԱլկուիսկրանք (810-1), զոր ոմանք իր բուն հայկական անունովը Արշակ կը կոչեն. իսկ Տանտոլոյ պատմիչն խանգարելով Հեպերսապիոս կամ Էպերսապիոս (Hebersabius, Ebersabius) կ'անուանէ զնա՝ որ եկաւ ի վենետիկ Օպէլէրիոյ դուքսը դատելու համար:

Ուրիշ զուգահիշակութիւն մ'ալ յիշենք՝ հայազգի կայսերաց գործակցութեան ընդ վենետաց. որ այս միջոցին եղած է՝ (818) Բարթէլիբացիոյ տոժին Ճիւսթինիանոյ որդւոյն առաքուածն առ Լեւոն, որոյ յատուկ մականունն եղաւ Հայկազն կոչուիլը, և ինքն եղաւ առաջին որ իրեն զրկուած դքսորդին Հիւպատ անուանեց, և պարզեց անոր և իր քաղաքին (814) այնպիսի ընծաներ՝ որ ոչ միայն մինչև հիմա՝ հազար տարիէ վերջ մնայուն են, այլ պիտի մնան միշտ. սրբազան և նուիրական Սրբոց Նշխարներ, Կենարար խաչին, Փրկչին մերոյ և Տիրամօր պատմութեանց, և աւելի յայտնի Սրբոյն Զաքարիայ ամբողջ մարմինը, և գանձեր ի շինութիւն հոյակապ եկեղեցւոյն, որ և նորոգութեանց համար կրած փոփոխութիւններովն ալ՝ դեռ եւս կայ և պիտի մնայ յիշատակ մեծագործութեան տուողին և ընդունողաց, և որոյ հովանւոյն տակ՝ ի թիւս սրբաւուն և աստուածանուէր կուսա-

նաց՝ ընծայեցին զանձինս և ոմանք ի հայազգի օրիորդաց: Գտնուին թերեւս և այլ թանկագին անօթք սրբազանք՝ հայկական նշմարօք, եւ թէ յուզուի Ս. Մարկոսի պատուական գանձատունը:

Սուրբ Մարկոս... անկարելի է Հայ-Վենետաց յիշատակութիւնն ըրած ատեննիս՝ չտոնարհիլ անգամ մը առաջի հրաշանուն հրաշակերտ տաճարիս, որոյ համար կրնանք ըսել, թէ ճարտարութիւն, ճոխութիւն, բարեպաշտութիւն, չքայուինք ըսել, թէ նաև գողութիւն՝ իւրարու գործակից ըլլալով՝ մասն առ մասն փոխադրեցին ի հարստագոյն քաղաքաց արևելից, և կառուցին ի հանդիպոյ Հանդրին հայելւոյն, ի հազարամիայ զարմանա դարուց. կամ իբր՝ անդամ անդամ յօշելով ի գեղեցեակազմ մարմնոց՝ յօգեցին և հաստատեցին միւս այլ գեղեցեակագոյն մարմին.— զհրաշալի տաճար Սրբոյն Մարկոսի, որ թերեւս յետ Սրբոյն Պետրոսի աշխարհամուտ տաճար է բովանդակ քրիստոնեայ ազգաց երկրի... Սուրբ Մարկոս, (և որովհետև հարկ է չուզելով իսկ թողուլ բազմապատիկ դիտելիք և ըսելիք,) որոյ կարգ կարգ ազնուանիւթ և մեծամեծ սիւնք փարելով գրկաբաց ճակատին չուրջ՝ քանդակուած կը կրեն վրանին բազմաթիւ անուանա հայկազուն ուխտաւորաց, թէպէտ և յետին ԺԶ և ԺԷ դարոց, յիշատակք հետևողաց իրենց նախնեաց, որ յետ նախնազունիցն՝ գէթ ստուգել երկոտասաներորդ դարէն ի վեր կը մտնէին և կ'ենէին ընդ պանծալի դրունսն: Սուրբ Մարկոս, որոյ անթիւ բազմակերպ և հրաշակերտ կազմուածոց մէջ՝ առաջին է իր դիրքը և ձեռագործ արուեստագիտութեան մէջ նախապատիւ համարուած՝ մեծ և ճոխ քառեակ մը պղնձաձոյլ ոսկեգօծ երիվարաց, որոց վրայ հայկական յիշատակ կը սաւառնի: Այս երիվարաց ճարտար արուեստագետն համարեալ է յոմանց Լիւսիպպոս, և յայլոց ուրիշ պէսպէս անձինք. այլ հաւանական կարծուի թէ աշխարհակալ թագաւորը Արշակունեաց Հայոց՝ որ Քրիստոսէ հարիւր տարի առաջ տիրեցին հեղ մի ելլադայ, այն դրախտակերպ գաւառէն կորզելով յափշտակելով այդ երիվարները՝ փոխադրեցին ի Հայաստան, ուստի՝ ըստ աւանդութեան՝ Հայոց Տիրիթ թագաւորէն ընծայեցան Հռովմայ Ներոն կայսեր: Բայց այլք հաւանականադոյն եւս կարծեօք կ'ենթադրեն թէ մեծն և սուրբն Տրդատ՝ Կոստանդինոսի ընծայ զրկած ըլլայ այդ չորս երիվարները, և իրմէ ալ՝ Վոսիորի ափանց վրայ կառուցած նոր դաստակերտին՝ Բիւզանդիոնի. անտի ի վենետիկ փոխադրուելուն դէպք և ժամանակ՝ ամենուն յայտնի է. ուստի և մեզ ոչ միայն լուել արժան է ատոր, այլ նաև այդ հրաշակերտից չիւսութեան և տեղափոխութեան մեծ խնդրոյն վրայ: Սակայն մինչև որ անժխտելի քննադատութիւն իր վերջին և համոզիչ խօսքը չըսէ, պիտի չգագրինք զարմանքով նայելն անոնց վրայ, իբրեւ ի գանձա՝ որ դարերով պահուեցան ի հայ երկրի, և իբրև ի կողոպուտս՝ հզօր ձեռաց Հայոյն ի տկա-

րաց, և յառաւ տուրս հայ ձեռաց առ հղօրագոյնս, և նախանա-
մութեան տնօրինելով՝ դադրելով հօն ուր հիմայ կեցած են, ի
պանծալի գլուխ վենետկոյ. վասն զի այսպէս պատշաճական և ար-
ժանաւոր է մեզ կոչել զեկեղեցի Սրբոյն Մարկոսի՝ ի հոյս հարիւրա-
ւոր սուրբ և քաղաքական շինուածոց աղբիական զխոյն:

Շարունակելի:

ՄԱՍԻՔ

Պատմական աւանդութեան համեմատ Մասիս իւր անունն առած
է Ամասիա նահապետէն, թէպէտ և քննութեան արժանի է և այն
ցարդ տեղող աւանդութիւնը, ըստ որում փոքր Մասիս հին տառն
ՍԻՍ կ'անուանուէր, իսկ Աւագն՝ ՄՍ - ՍԻՍ, նման հին քանի մի զոյգ
տեղեաց, որոց մին ՄՍ մասնկամբ կը կոչուէր, իսկ միւսն ոչ: Օտար-
ազգեաց ամենէն աւելի ծանօթ տեղին բոլոր Հայաստանի մէջ այս
է, և սորա քանի որ սկսան քննել զՀայաստան, այս երկու լեռները
ՄՍԻՍ և ՓՈՒՐ ՄԱՐՍԻՍ կը կոչեն. թէպէտ և այս բանս չի ստուգուիր ոչ 'ի
Ս. Գրոց և ոչ 'ի նախնեաց մերոց. վասն զի Արարատ՝ աշխարհին
կամ երկրին անունն է, և ոչ թէ այս կամ այն լեռան, և այս երկրին
մէջ փոխուող լեռինք, յորս են և Մասիք՝ Արարատեան կը կոչուին:
Այս լեռանս բարձրութենէն աւելի՝ համաշխարհական համբաւ Ջըր-
հեղեղին՝ Ս. Գրոց հաւատացողաց մտաց մէջ զրոյմեալ ապաւորեց
մեր ազգին և լեռան յիշատակը: Ուստի թէպէտ և ոչ 'ի Ս. Գրոց և
ոչ յարտաքին պատմութենէ կրնանք աներկբայ ցուցնել թէ ստու-
գապէս նոյեան տապանը իշաւ Մասեաց վրայ, սակայն յոյժ հաւա-
նական է, (մանաւանդ թէ հարկ է խոստովանիլ՝ որ տապանն իշաւ
Արարատեան յերանց վրայ, որով բովանդակ Հայաստանի լեռինք ևս
կ'իմացուին). վասն զի այժմեան և հին կարծիքն այս է, և 'ի վերջին
դարս բոլորովին զայս կը յատկացընեն Մասիս լեռան. որով պէտք է
սրբազան ինչ համարել այս լեռը, ինչպէս որ անոր շրջակայքը բը-
նակող նախնիք մեր սրբազան և ահեղ կը համարէին զայն, թէպէտ
ոչ յիշատակաւ յընդեղին, այլ գէթ իրենց առասպելաց համե-
մատ՝ ֆալցաց բնակութիւն կարծելով զայն: Զայս կ'ապշտեն ևս լե-
ռանս բնական տեսքն և կազմութիւնն, ուղղակի գէպ 'ի վեր բար-